ՄԵԼԱՆԻԱ
ԲԱԴԱԼՅԱՆ

ՍՏՎԵՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍՏՎԵՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան
«Վան Արյան»
2018

ՀԳՄ 821.19-1 Բաղալյան
ԳՄԴ 84 (5Հ)-4
Բ 141

Բ 141 **ԲԱՂԱԼՅԱՆ ՄԵԼԱՆԻԱ**
ՍՏՎԵՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ/ Բանաստեղծ.:
Մ. Բաղալյան:- Եր.: Վան Արյան 2018, 64 էջ:

© Բաղալյան Մ., 2018

ISBN 978-9939-70-259-9

ՁՈՆ ԳԻՇԵՐԻՆ

Լույսը այսքան երբ էր հոսել
Գիշերների պաղ ջրերում,
Երբ էր ցավը զինվել այսչափ
Հայտնության պես անմեկնելի...

-Ի՞նչ ուժ է, Տեր, խաղաղության քո ափերից
Հնչյունի մեջ տարրալուծում
Ակնթարթն այս երանության...

Աղոթքը՝ սեր՛
Աղոթքը՝ հաց
Դռան առաջ Սպասումի:

Այն երբ արդյոք, ինչպես հանկարծ,
Գիշերները ընձյուղեցիր վերին սիրով...
Ու վերստին հոգին՝ երգի,
Հոգին՝ երգի՛,-
Երգը հացի վերածեցիր...

25. 03. 2016

ԱՍՏՂԱՓՈՇԻ

...Անձրեւի սրտում հալվում է փոշին
իմ ջահելության.-
Հիշողության մեջ աճյունասափորի
Երկյուղի ստվերներ, անմարմին թռչուններ:

Աստղափոշին իմ մերկ ուսերի
Մին տոնավաճառում թափառաշրջիկ
մոռացա անհույս –
Եվ արթնացումներին ի տես
Ունկնդիր էի խոսքի զմայլանքին...

21. 04. 2001

ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվ ժամանակը դառնում է փոշի.-
Լռում է կյանքը նիրհի մեջ ձմռան,
Արդ կանչում եմ հիշողություններիս
Ամառվա ոսկին.-
Եվ Սերը որպես մոգական մի ձայն
Վերարթնացնում է ավիշը կյանքի...

Դու՝ որ հեռու ես, անծանոթ, օտար,
Բայց հասանելի ձայներին այս տաք,
Լուռ անձրեւում է հայացքիդ ոսկին,
Չի կարդալ գիտես գույների հոգին:

Հոգ չէ թե դրսում, գորշության տրված
Քաղաքն անժպիտ չի տեսնում ոչինչ,
Մարդիկ անհաղորդ մանկան աչքերին,
Տրված փայլին կավե շինվածքի,
Մին մոլության մեջ
Զրկված են ահա Բառի շնորհից...

Կյա՛նք, ետ չես դարձնում եւ ոչ մի խեցի,-
Սուտ ազատության ուռկանների մեջ
Ես որտե՞ղ փնտրեմ արթնության ոգին,
Երբ շուրջս միայն աղմուկն է մերժման...

7. 01. 2017

ՀԵՎՔ

Ոչինչ դաժան չէ այնքան՝
երբ բառն է լքված: -
Կարծես ուրվական, անմարմին հոգի,
Օրը շրջում է ճանապարհին կույր-
Ճռճվում ստվերներ, փհատվում ձայներ:-

Եվ լռությունը սառը հպումից,
Հեգնում է ինձ փրկության հույսով,
Մի տարածություն՝ սպասումից զուրկ,
Զայնակցում է արդ օրվա ավարտին:

- Նա դեռ կա, նա դեռ չի լքված,
Հիշողության մեջ մարող ձեռքերի…

Եվ օրը կրկին բացում է հոգին,
Թվում է մերկ ու անավարտ,
Եվ երկդիմի, շպարված այնքան,
Որ ժամանակի քղանցքների մեջ
Կորչում են անհետք թե սեր, թե խոստում:

Հեռացող հավատ անպաշտպան ու հեգ,
Իջիր հետքերին օտար լռության,
Իջիր որպես հեւք, որպես կարեկցանք
Դառնահամ ու պաղ այս դատարկության…

24.02. 2017

ՍԵՐԸ

Լուռ - գունատ լուսնի
ճյուղերն ի կախ.
Սեր, որքան անցողիկ
ու մերկ ես դու,
Եվ տեւական է գիշերը,
Երբ չկան գույներ՝ բառեր աղոթքի…

Ջրեր, ձեր խորքում
Սերը լռում է
որպես լուսնաքար.
Ոչ դուռ է բացվում,
Ոչ էլ դուռ փակվում…
Օ՛ր, անհաղորդ ես եւ օտարացած…

2015

ՀԵՌԱՑՈՒՄ

Հեռացող վարդ, կես ճանապարհին
Անցյալն ես լքում,
Ջրերում այն արծաթահոս
Փլվում են թռչնաբները
կյանքի...

Ես գիտեմ՝
Մոռացության գետից այնկողմ
Ով է բնակվում,
Արծագանքը՝ պարզ գոյությունների,
- Իմաստավորողն ո՞վ է
Առավոտների ողջամտության:

21. 04. 2001

ԼՈՒՍԻՆՆ ԻՋՆՈՒՄ Է ՋՐԵՐԻՆ

Գիշերը հանգչում, սառչում է, ցնցում,
Լուսինը հանդարտ, իջնում ջրերին,
Մակույկը թեքվում, հեռանում է լուռ,
Լքում ջրերի իմաստուն ոգին...

Ու մոռացվում է օրը երեկվա,
Մարում է ձայն ու խեղդվում արցունք,
-Միեւնույն գետը կրկին չես անցնի,-
Լսվում է ձայնը հեռացող օրվա:

Ժամանակն անտես խաբկանք է ահա,
Եվ հեգնանք տխուր անորոշության.
- Հոգիս մրսում է, - շշնջում եմ քեզ,-
Ու լսում ձայնը անտարբերության...

Ահա փշրում է բառերի հոգին
Լուսնի ապակին իջած ջրերին,
Մակույկը թեքվում, հեռանում է լուռ,
Ես կորցնում եմ ամառվա ոսկին...

27. 11. 2015

ՁԱՅՆԵՐ

Թողնելով ժպիտը
Ես հեռանում եմ:
Ծովը՝ դեղին անհունում
շուրթերն է լիզում
աղի:
Ամայի ափ՝
Կամնչ կարոտի ...

-Վերցրու ինձանից զգացումը սիրո,
Հեռացրու ձայնը ջրերի,
Ետ տար ձեռքերն այս օտար...

Ահա մոտենում եմ ես հորիզոնին,
Որտեղից այն կողմ բառեր չկան,
Գույներ են դիպչում իմ մերկ
ձեռքերին,
Անձանոթ ձայներ՝ իջած ջրերին:
Չկա տարածանք, ստվերը կյանքի,
Լռությունը մերկ անհայտ եզերքի
Նոր գոյության խոստում է ահա...

ԲԱՌԸ

Քամի՝ անհասցե կարոտ.-
Անհնազանդ,
թող նետվի եզերքին
Լռությունն այս վերջին...

Հեռավորությունն առաձգական
մոտ է վախճանին՝ մտերմությամբ ցավի:

Օ՛, քամի անընտել, մերձեցրու ձեռքս
մերկ տարածություններին,
Թող տագնապն այսպես
ավարտի էջը թրթռացող օրվա:

Անհայտության մեջ բացված աչք -
լողացող ստվերներ
շոշափելի վախի.-
Խենթությունը բառի
տագնապի գույն ունի
անտեսանելի,
որ իջնում է հույսի պատերին
ճերմակ էջերի...

ՄԵՐՁԵՑՈՒՄ

Հիշողություն, կորցրել ես հետքերը.
Թափառող արյուն- օտարացած հող-
Վերջին անձրեւը՝ մարող մի հնչյուն,-
Քեզ՝ որ հեռու ու մոտ ես այսքան:

Երկիր՝ քաղցր ու դառը- սակայն բաղձալի,
Դու մոռանում ես ջրերը նախկին,
Բայց հոգին այն հին արթնանում է, տես,
Ու վերադարձնում սեր, արյուն ու տենչ:

Այնտեղ անապատը տնքում հրդեհված,
Օտարություն է սողոսկում հոգիս,
Բայց դու չգնաս, բայց դու չլքես,
Հետքը թարմ մաշկի՝ ծխացող օրվա:

Ահա մերձեցումը կարմիր ավազի,
Ցնցում է նիրհը խոնարհվող վարդի,
Որ բռնկումը դաջված կտավին
Ջղառնա հպում սոսկ ակնթարթի...

30. 11. 2015

ԱՐՏԻՍՏԸ

Գեղեցկության աչքերում մարեցիր լույսը.-
-Վերադարձրո՛ւ ետ:
Առավոտը բացվում է հեզահամբույր,
Ծաղկի թերթի պես պարզ, խոստումնալից:

Դու բաժանեցիր հոգին մասերի,
Ի՛նչ շռայլություն,
Նայիր, ահա պատուհանիդ տակ
Ի՛նչ երգ է հին պտտվում անվերջ:

Ժամանակ - անիվ, շղթայված հավետ,
Ինչ փույթ՝ մեծ, թե փոքր սակայն.-
Ճերմակին գույն պետք չէ, մի խառնիր
Օրվա սրճահամ բաժին դառնության:

-Դու՝ որտե՞ղ, ինչպե՞ս,
Քամու հեռացող կանչի,
Լուսնի ցած իջնող արծաթափայլի մեջ
Դու որտե՞ղ ես:

Ահա շրջանցում է անփույթ, հպանցիկ,
Ձեռքը ծառերի աղերսն առ երկինք,
Շփումը հողի, խոտի ձայնին հեզ
Գորշ ստվեր է հակադարձում խուլ:

Ինչու՞ է սակայն գույնը մերկանում
Մտավախության քամուց հյուսիսի...
Լուսնի ցած իջնող արծաթափայլի մեջ,
Ինչու՞ ես անվերջ հեռացում փնտրում...

23. 05. 2016

ՀԻՆ ՔԱՂԱՔ

Ժամանակի ռիթմից դուրս,
Ահա միակ ընկերն իմ
Անհայտ մի ծառ, -
Գիշերվա պահապան:

Անձրեւը ներկում է գիշերը ծածուկ,
Իջնում թռչունի թեւերին բարակ,
Միակ այցելուն այն հին քաղաքի,
Որտեղ բառերը դեռ չեն մերկացել:

- Ինչը կարեւոր է,- աչքով չես տեսնի,-
Լսվում է ձայնը նուրբ հոգիների:

Ծառը մերձենում ու մերթ հեռանում,
Ձայնը գիշերվա - թեթեւ մի հնչյուն.-
Միակ այցելուն՝ անձրեւը ահա,
Մի հետք անխոստում, դանդաղ հեռացող...

19. 05. 2016

ՓՈՂՈՑԻ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

Երկնքի կապույտի մեջ սառել է լուսինը,
Նա ցած չի իջնում, ինչպես՝ նկարում,
Եվ ոչ մի մակույկ չի սպասում նրան -
Հայացքը՝ կաթնագույն:

Փողոցի մի անկյունում հատ ու կենտ անցորդներ են շրջում,
Նա անհետանում ու հայտնվում է կրկին:
Չի ժպտում, չի արձագանքում, լռում է՝ մոտենալով հեռանում,
որ նորից վերադառնա:

Փողոցի մյուս ծայրից բարձրանում է տարօրինակ քամի,
հարձակվում ու խլում այն, ինչ քիչ առաջ պտտվում էր շուրջդ,
խառնվում մազերիդ, քաշում հագուստդ, փորձում ներս մտնել:

Դու հայտնվում ես քամու հետ, աչքերիդ մեջ հանդարտություն:
- Զգացմունքից դուրս աշխարհը անգո է.- ուզում եմ այդպես լինի:
Մտքերը գունատվում, սեղմվում, կծկվում, լքում են փողոցը:
- Լուսնի շեղբը դաշույն է՝
Խրված մազերիս մեջ, քամուց ճոճվող...

Հարկավոր է թողնել անձրեւին, որ հանդարտ իջնի,
Վերեւ չնայել.- նա թաքցնում է բարակ մարմինը:
Հարկավոր է դադար տալ գույնի խաղին,
Տարրալուծվել օդի, անցորդի հայացքի մեջ...

Չսպասել, չցավալ, զրկել մտքերը փայլից,
Օրվա հետ պարպել գավաթը գինու,
Ինչ փույթ, թե այնտեղ մենակ է Լուսինը...
Սեղմել մատների մեջ փշրվող ապակին,
Պաշտպանել այնպես, ինչպես մարմինը թաց:

Հետո երկար կարտասվեմ...
Անձրեւ կգա,
Զրույցը թռչունի թեւերի հետ
կարձագանքի պատուհանի ապակուն:

Բախիր դուռը, դու գիտես՝ ինչպես.
Միեւնույն է՝ ոչինչ չի մնում գաղտնի:
Ես կգամ իբրեւ մանկան ճիչ,
Իբրեւ թռչունի ժպիտ, անձրեւի կաթիլ,
Որ չդատարկվի երկինքը,
Քանի գիշերը չի հասունացել լուսնի արգանդում...

1.02. 2016

ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

Արեւածաղկի աչքերի մեջ բացվեց առավոտը:
Կտավը մերկացավ:
Գիշերը հիշեց գույնի մասին ու լռեց:
Հեռացումը դեռ ավարտ չէ...

3.10. 2016

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԷՍՔԻԶ

Արեւը հանգչում է ծառի ուսերին,
Օրը թեքվում է դեպի վախճանն իր.
Չհասցրի ձեռքս մերկացնել...
Ցանկապատի ծեր կաչաղակը
Դեռ սպասում է...

18. 10. 16

ՀԵՏՔԵՐ

Տարածությանը նետված՝
իբրեւ անավարտ կտավ.-
Մայթերին հետքեր չկան...

Ուշացող ժամադրություն,
Հիշողություն՝ հանձնված ծառի արմատին:
Բառ,-
Երբ չունես մարմին ու չունես հոգի,
Եվ անգամ հնչյուն՝
Մուրացիկ ես լոկ:

Ժամն է՝
Հավաքիր
Թղթերը ճերմակ:
Այն, ինչ ունես,
Գրվել է այլ տեղ...

18. 10. 16

ԿԱՐՈՏ

Ահա եւ շռայլանք հիացմունքի.
չընթերցված կարոտ,
Եվ պայծառացում իմաստնացողի,
Ոչ ոք չէր տեսնում կարոտը աղի,
Որ կոպերի տակ արցունք էր
Աստղի...

18. 10. 16

ԱՊՐԻԼ

Բացում եմ պատուհանը
Օրվան թողնում ներս.-
Մի դեղին ժպիտ
Որպես լուռ խոստում
Իջնում է,
Ծաղկում ձեռքերիս...

Երազը անհոգ
Ճերմակ մի թիթեռ,
Թռավ,-
Հեռացավ:

1. 04. 2018



ՈՒ ԵՍ ԿԼՌԵՄ

Լռության մեջ մայթերին հին,
Հիշողություն է մաշում անցյալը.-
-Թափառական հոգի, քեզ զուր մի տանջիր,
Խարիսխ չես գցի անապատում ծեր,-
Հարբած հայացքում գիշերների
Փշրեցիր կավը ժամանակի…

Ահա մերձենում է սահմանն անդինի,
Ու երբ հանդիպես, էլ չես երկնչի
Կանէանա հայացքիդ փոշին
Դառնության մեջ չապրված կյանքի:

Քեզ դեռ կհիշեն, երբ խոսքերը սին
Սառչեն դատարկ բաժակների մեջ,
Ու կհեռանաս
Անավարտ թողած հետքերդ նախկին…

ԲԱՑՎՈՒՄ Է ՕՐԸ

Քաղաքի հեռացող ստվերներում.-
Դու երկփեղկված իբրեւ խեցի,
Թափառական օրերի մեջ,
Մերկացնում ես անպաշտպան հոգիդ:

Գիշե՛ր, սուզվիր մարմնիս մեջ,
Որտեղ կես ճանապարհը լքողների
Ուրվականները ճռճվում են
Անհուսորեն մենակ…

…Ես կվերադառնամ ափերին այն մերկ,
Ուր մայրամուտներից շիկնած
Հանդիպումներից ծնվում է նոր օր,
Սրբագործված իբրեւ արեւի համբույր:

30. 10.16

ՊԱՏԿԵՐ

Առավոտը արթնանում
Թռչունի թեւի մեջ,
Օրվա գույներից
Աշուն է քամին հավաքում…

Կեսգիշերի լռության մեջ
բացվում է անցյալի
ծանոթ գեղեցկություն,
Որ մենք կպահենք
Իբրեւ հրճվանք ակնթարթի,
Իբրեւ ծաղկի թափանցիկ ժպիտ:

Դանդաղ փակվում է
Վարագույրը հուշի:-
…Դու թողեցիր հանգչի
արթնացող գույնը ծփանքի: -

Այսօր թռուչի թեւերի մեջ
Արթնացավ իմ հոգին.-
Դու հիշեցիր օրն այն,
Որ բացվեց իբրեւ ծաղկի
թափանցիկ ժպիտ:

5.05. 2017

ՁԱՅՆԱԿՑՈՒՄ

Օրը ծնվում է մերկ,
Որպես երեկվա արձագանք,
որպես մի մանուկ,
Լույսը՝ ճիչ
թիկնած կապույտին:

Ահա մոտենում, քսվում հայացքիդ՝
Շոյանք թե՞ ապտակ…
Ձեռքիդ ափի մեջ տրոփում է լուռ,
Օրը՝ թաքնված, թվացյալ հանգերգ:

Բացվող թերթերին օրվա քմայքի,
Ձեռքդ, ό ոչ, չես մեկնում երբեք, -
Որտեղ չկան քմայքներ դատարկ,
Ուր միայնակ է ծառը դիմադրում:

Երբ մերկ է բառը, նա չունի սահման,
Եվ չունի հնչյուն,
Ու ցավ չի տալիս…

13. 05 2017

ՃԵՐՄԱԿ ՀՈՒՅՍ

Ետ տար ձեռքդ -
Վերադարձիր լռության խորշերին.-
Այնտեղ թողել ես անցյալից եկող ձայն:
Խիղճը խաչելուց անց դեռ հազար տարի՝
չի փոխվել ոչինչ,-
Դեռ պիտի հատել սահմանը մահի...
Դեռ պիտի սպասել, ժամն է անպատեհ...

Դու շփոթեցիր հասցեն նենգ օրվա,
Փշալարերին իջավ ստվերը կյանքի,
Շեկ խեցիների լռության մեջ մերկ,
Դու երկսայրի բառ, անորոշ ստվեր,
Հեւացող իբրեւ մի թույլ սիզախոտ...

Մուգ ստվերագծի շրջանակից դուրս,
Ճերմակ մի հույս ահա մոտենում,
Հպվում ուսերիս ու հեռանում է՝
Անշշուկ հուշ, ճերմակ քուն
Անտես..

05. 06. 2017

ԶՂՋՈՒՄ

Մերկանում է ձայնը–
Երկմտանքի ու զղջումի մեջ
Կորցրածն արդեն ցավ չի պատճառում:
Ճերմակ վարդի հիշողության հետ
Դու հեռանում ես:

Մոտեցողն ահա թռչուն է փոքրիկ,
Որ ձայնակցում է պատուհանիս տակ.
Ակնթարթն այնքան չքնաղ է ու հեզ,
Որքան լուսաբացը տերեւի սրտում...

Նա մոտենում է ահա այն պահին,
Երբ լույսը սնվում, մարմին է առնում
քամու թեւերին,
Օրը փոխվում է, դառնում է մի կին.
- Օ՜ կյանք՝ ստվերն ես դու ժամանակի...
Եվ գիշեր ինչպես Լուսնի հալածանք:-

- Ինչո՞ւ է հեռուն մերթ այնքան ցավոտ
ու մերթ... բերկրաձայն:

12. 07. 2017

ԱՄՌԱՆ ՄԻ ԳԻՇԵՐ

Մենակությու՛ն,
լցվում ես բաժակի մեջ առանց դադարի...

Թե ձեռքս երկարեմ՝ ցած կընկնեն աստղեր.
Ներքևում՝ փայլերը ... մեռած:

Երբ հասկը մոռացավ սերը հողի,
Աստղի կարոտը մարեց:

Գիշերը լուսանցքի մեջ,
կոտրում է բաժակը սառնության:

Այնտեղ աստղն է լալիս,
Լռության կտուրին մերկանում,
լքում արգանդը խավարի:

Ձեռքիս իջած մի թռչուն
մոռացավ գաղտնիքը գիշերվա...

15. 08. 2017

ԿԱՐՄԻՐ ՏԱՆԻՔՆԵՐԸ ՍԵԶԱՆԻ

Աշնան օրվա լույս,
առավոտի քնքշությամբ,
Այնքան մոտ են տանիքները՝
թեքված շրթունքին կանաչի:

Իսկ այնտեղ Լիվադակիայում անձրևը
ձիթենիների ճյուղերից կախ,
Թողնում է՝ բերքը հասունանա
ձեռքի պրկումից տաք...

Դու ներկում ես հոգուդ տանիքները
Կապույտ:
Հայացքիդ մեջ հայլվում են
Կարմիր տանիքները
Սեզանի:

Ահա օրը,
Որտեղ գույնն է նվաղում,
Եվ աշունը՝ տերևի ժպիտի մեջ
Թողնում է հետքեր
Կարմիր տանիքին:

9. 10. 2017

ԱՇՆԱՆԱՅԻՆ

Գիշեր, բացված էջ,
Խոսքեր,
որ մերկանում են արագ,
Նետվում պարապության պատերին:-

Կորուստ, ետ չես դառնա երբեք,
Ափսոսանք, որ դառնություն ես խառնում
Մենակության էջերին:

Տխրության աշուն
ծառի երակներից կախ,
Հեռացող տերեւը մայթին
կետագծեր է շարում:

«Նա պիտի մեռնի, որ նորից ապրի»,-
Գրում է իմ հին ընկերը հեռվից:

Ես գիտեմ՝
Լույսը կբացվի, երբ իր ժամը գա,
Նա չի ուշանա...

21.11. 2017

ՕՐ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

Իբրեւ վախվորած թռչուն,
Օրն այս դեկտեմբերի
Թակում է պատուհանը բաց...

Մեր միջեւ լռում է
տարածությունը ձայնի:

Օրը մերկանում է,
ինչպես ծառն այս դեկտեմբերի...
Բացում
թերթերը գաղտնի:

Օ՛ հպվիր Ծառին,
քանի դեռ քոնն է օրը,
Հանձնվիր ազատությանը
թռչնի թեւերի,
Մոտեցիր թղթին,
որոնց չեն դիպել
Բառեր լպրծուն:

06. 12. 2017

ԺՊԻՏ

Գիշերվա հետք
Անձրեւոտ առավոտների.-
Երբ թռչուններն անխոս
Այցելում են
Լռության մեջ թափառող
Աստղի հայացքից
ծնված երազին:

Երբ գիշերվա սիրո ակնթարթը
Հեռավորության ապակիներին
Երազի ու կյանքի միջեւ
Ձգում է բարակ թել:

Ես նշմարում եմ փխրուն ժպիտը
անցորդի,
Որ առավոտյան
Անձրեւի կաթիլի մեջ
Դառնում է հնչյուն
Թաց տանիքներին
Կարմիր քաղաքի...

15.01. 2018

ԳԱՂՏՆԻՔ

Ի՜նչ փափուկ ծայներ՝
Մայթերին օրվա,
Աղջամուղջ ծանոթ,
Հետքեր գիշերվա,
Որ ծաղկեցին
աչքերից ծածուկ:

Մեր վախերը թաքուն
Տանիքներին անձրեւների
արցունքներ թողեցին...
Պատուհաններին փխրուն
խազեր կային,
ծայներ
Վաղուց հեռացած
Հոգիների...

Օ՜, ինչ բերկրանք հայտնության մեջ
կարմիր ավազի:-
Կոպերի տակ առավոտն ահա
հագուստն է փոխում:..

17. 02. 2018

ԱՆԱՎԱՐՏ

Քեզ հանդիպում եմ
իբրեւ սկիզբ.-
Երազը բացում է վարագույրը
գիշերվա ճերմակության:

Ես գիտեմ՝ երեխան ճչում է
Ցավից մերկության,
Տեսնում
շարունակությունը ծնունդի,
իբրեւ օտար աշխարհի տարօրինակ
ստվեր...

-Դուռդ կողպիր, անցորդ,
Եթե հավատաս, չես ընկնի երբեք:
Անձրեւը, տե՛ս, կիսալույսի մեջ
Նույնն է շշնջում...

22. 03. 2018

ՏԽՐՈՒԹՅԱՆ ԱՅԳԻ

Հիշողության ծաղիկներ
Հին ամառների, որ ներկեցիք այգին
Բերկրանքի:
Օդի մեջ ահա դադար...
դանդաղ սպասումի:

Նիրհում է ծառը ավիշների մեջ
վիրավորանքի...
Ցավի արմատում
լույս է աղերսում
Արթնության ...

22.03.2018

ՍՏՎԵՐՆԵՐ

1. Երազը ապրում է արեւի մեջ,
Հողը ծնում է զավակներ:
Հեքիաթ չկար, սովորական մի կյանք կար,
Նիրհող քաղաքից բարձրացող օդ:
Երազ չկար.-
Ուռկանն ընկած թպրտացող մի կյանք կար,
Գոյություն...

2. Ուրվագծերով խճճված
Սրճագույն պատկերներ
Խզբզոցի,-
անհասկանալի՝ ցանկության դեպքում միայն:
Ծխախոտի ծխի պես դառը
դատարկ բաժակի մեջ
Լցված գինի
արնագույն, արնահամ....

Կյանք, անպարկեշտ լուսանցքում
Պարտականությունը թանաքի պես
Լղոզել ես տանս պատերին...

Անձրեւեցին աչքերը մանուկ
կտավին անավարտ...
Մանկության ստվերներ,
առավոտների մեջ կիսաբաց...

Ես ինչ անեմ, երբ գինին իբրեւ թույն էր հոսում
երազի մեջ կորսված...

ԱՆԵԼԱՆԵԼԻ

Ես թեւաթափ ու մերկ
Խարազնազգեստ այսպես,
Ու բոկոտն, երբ աչքերս են կույր,
Ես փնտրում եմ քարեր սուրսայր, հերյուն ու մաղ...

Դու, որ վկայությունն ես անհայտ ուժի,
Ետ ես տանում ձեռքդ,
Մեկնում անվերադարձ,
Լքում դռներն իբրեւ ապտակ,
Քանզի արեւածագը լսելի չէր ինձ...

ՄԵՂՔԸ

Տեղավորիր հոգիս մարմնի մեջ օտարացած.
Որից մեղքի սարսուռն է ծնվում- մահն աներեւույթ:
Գիտեմ, մուրացիկ է սերս, անհնազանդ,
Մայթերին սայթաքուն:

-Դու որտե՞ղ ես,
Երբ ես մերժեցել ինձ խելացնորեն այսպես հարազատ,
Հեռացումի համար օտար ժամանակներում
Ո՞վ է զղջացել...

Անձրեւն ինձ դադար չի տալու.-
Քո հոգին դարձդարձիկ, միակ այցելուն է
չապրած օրերիս...

21. 01. 99

ԱՆԹԱՓԱՆՑ

Մի՛ թաքցրու դեմքդ քարի մեջ անանուն,
Ինձ մի որոնիր դիմանկարի, կավե սափորի
անշունչ պատկերում:
Մատներիդ լարումից օդը սառչում է,-
Օրվա մնացորդը ավազահատիկի լռությամբ
վերադարձրու ինձ:-
Ես պահապանն եմ սահանքներում ապրող
ծաղկեփշերի...

21. 04. 2001

ԱՐՏԱՔՍՈՒՄ

Եվ բառերը, որոնց տանջում ենք,
Եվ Ցավը, որ կեցություն է դառնում
Միայն քոնը չէ...

(Որքան թանկ է կորուստը ձեռք բերածի հանդեպ...):

Ասում են հողը սրբանում է արյամբ նահատակների,
Եվ ծնվում են մանուկներ նրանց մարմիններից...
Հոգին, ոգին ու լույսը
Ապրում են սափորների մեջ մեր մարմինների:

Ես չեմ ապրում ներկաների մեջ,
Ու չեմ ներծծվում բիբերում արյան,
Թողնում եմ լռությունը
Հողի նիրհող արմատների մեջ...

Խեղկատակի հագուստներով չեմ շրջում
Փողոցներով անծանոթ,
Ուր թվում է՝ կորցրել եմ
Ողջամտությանս վերջին հույսերը...

Ես մուրացկան չեմ հոգու.-
Բայց դատարկ մայթերին
Թռչուններն անգամ փշրանքից են սնվում...
Ես չեմ ուզում տեսնել փշրվող լեռների
արցունքները թաքուն,
Որ չկործանվեմ նորից...

Կարեկցանքը թռչուններին կերակրում է,
Եվ հիշողությունը արթուն է
Եղեւնու փշերի պես...

1999թ.

ԵՐԱԶ

Բառերը լքում են մարմինները մեր.-
Մերձեցողները՝ անընտել օրերին այս գոլ,
Անտրտունջ ու խոնջ,
Կզգան նորեն հմայքը Բառի՝
Զուգվելով բարեհաճությամբ արթուն:

Մեղաբարձ ուսերը մեր կոր
Կպտղավորվեն, երբ գիշերասույզ
Ձեռքերը երերուն պեղեն անհունը Բառի
Հավատքի բուրվառով,
Ու եղեսպակները ամոքեն մեզ:

Նրանց ճերմակ աչքերը կսահեն
Նորահայտ Գրքի էջերի վրայով,
Քաղցած տողեր կփորձեն սերտել,
Ու կարտասվեն թաքուն,
Որտեղ բառերը իբրեւ ոգու թովչանք,
Դահճի պես հաճախ անողոք են սակայն...

Գիշերվա տարածությունը նորից կանհունի,
Եվ ինձ կուղեկցեն աղավնակերպ էակներ,
Ու բարեկամն իմ ոսկե հանդերձով
Կձայնի ջրահոսքի պես իմաստուն:

Գառների ձայնով կաթնաթույր երեկոն
Աղոթք կկարդա,
Եվ հովիվները եղերամայրերին հավատքի կկոչեն
Իրենց որդիների գալստյան հույսով...

1999

ԿԱՐՄԻՐ ԽԵՑԻ

Երկփեղկված իբրեւ խեցի
Ցանցաթելերի մեջ
Տեսնում եմ Լեռը
Որ թեւատարած
Հրավեր է:

Ես ուղեկիցն եմ քամիների.-
Աեզրության բերկրանք,
Որ բերում է ամանորի
Հույսեր մշտատեւ:

Ումից հայցեմ սփոփանքը կորուսյալ օրերի:-
Դու, որ հեռու ես ապրում
Կյանքը,
Չես նկատում ինձ՝ ներծծված
Օրվա ծխի մեջ:

Ովքե՞ր են ինձ ուղեկցում,
Ի՞նչ ծառեր են նկարվում բիբերում կավի.
Եվ ի՞նչ հայտնություն,
Երբ անհայտ է ծագումը
Եվ օտար:

Մեզ մի սփոփիր, աշուն,
Քո մեջ արեւն է հանգչում՝
անձրեւափոշին
կյանքի ջարդված պնակի:

5.12. 96

ՀԵՌԱՑՈՒՄ

Երբ սպիանում է համը դառնության,
Այնժամ նորաբաց արմատները երկնչող
Լուսնի ջիղն են պրկում հողի մեջ ամոքուն:

Չդասդասված ու խուռներամ օրերում անհաշիվ
Ցիրուցան է սիրտն իմ՝ աշնան վիատության հանգույն,
Հեռացող տարաբեւեռ բավիղներում մոլորամիտ,
Գիշերները արթուն են շան զգոնությամբ,

Որտեղ տարին Ծննդյան
Խաչափայտ է մաքրությամբ ծորուն,
Սիրո խնկարկումով:

-Տա՛ր ինձ հեռու, ուր մերկ է դաշտը,
Ուր քամու ուժգնությամբ
Կյանքն է ազատագրվում...

02. 12. 98

ԱՆՀՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Օրերը՝ թռչուններ ասես,
Տնքում են հիշողությունից թաց:
Դեղնած բիբերում
Հավատը ցնցոտիներ չի ճոճում:
Անսեր կանանց հայացքներից հալածական
Փողոցների ամայությունը
ակոսներն է բացում մոռացման...

Ես գիտեմ՝ մենության դռներից այն կողմ
Մահն է բնակվում՝ գույնով անտեսլական,-
Եվ ջրերի մեջ խայտացող ձկներին անհաղորդ
Ես՝ Ցավի մերկությունից օտարացած մի կին,
Պահի սքանչացման մեջ տեսա
Լույսը մշտահոս՝ Ձեռքին ապավեն:
Հեռացման լեռներում-ընդվզում ինչու՞,
Երբ կարիքն այնքան շատ է ծնկաչոք...

08. 02. 99

ԵՐԿՅՈՒՂ

Մենք փնտրում ենք դեմքերը մեր,
Երբ անծանոթ են գույները ամռան,
Երբ դառնահամ կանանց շուրթերից
- Հեռացումը նման է ծփանքի
Մաքուր ջրերի լայն հանդարտության:

Թափանցիկ – հմայք գիշերվա խորքում
Հոսում են դեմքեր վաղուց մոռացված,
Սահում է փոշին՝ աստղակաթ-պայծառ,
Եվ տեսանելի է պատկերը օրվա,
Որ աչքերիս մեջ մխրճված բեկոր՝
Խավարի թույնն էր իմ անհուսության:

Եվ փականները դժվարեն բացվող,
Միջնորդ քամու ճանապարհներով
Պարզում են ճերմակ մի տարածություն,
Ուր մոտենում եմ ես երկյուղածորեն,
Եվ օրհնաբան են շուրթերը դռան:

25. 08. 98

ՄԱՍՐԵՆԻ

Ամառվա օր, արեւահամբույրով հարբած տարփուհի,-
Գիշերվա հմայքից խաբված տղամարդու խոսքի արժեքը՝
Չորացած խոտի գին է, ոչ ավելի:

Բառերից անդին, տարածությունների անհունության մեջ
Իմ բարեկամները
Կանաչ մարգագետիններում տներ են կառուցում:
Եվ կապուտաչյա, երկարոտն աղջիկները
Սեր չեն մուրում այնտեղ:

Լիճը պարզ է՝ հանդերձավորված ծաղկուն ճերմակով,
Եվ ասպնջական է հողը՝ աստղի մաքրությամբ:
Այնտեղ հայրերը մեր ազնիվ ցորենի հունդեր են շաղում,
Եվ հարսնացուներն են բարակիրան, ճերմակածեռ
Ու լիճն է առագաստը նրանց հայտնության...

Դու եկար՝ մերկացնելու ձեռքերն իմ:-

Ոչինչ չարժեն ծառի արմատներում ապրող կիրքը՝
հասուն կնոջ մերկության դեմ,
Եվ հեղեղը արյան, որի հետ պսակված են թխահեր կանայք,
Ոչինչ չարժեն մարմինները մաշկող կարոտը եւ սերը աղի:

Ես կկանչեմ նրան, ով գիտի լեռների խաղաղության գինը,
Ով տարածության մեջ չի ապրում խաբկանքը գույնի,
Ես կկանչեմ նրան, ում ձայնը հարդի պես թեթեւ
ու ձեռքն է մաքուր,
Ես կկանչեմ Նրան, եւ առավոտները կլցվեն բերքով
բարեբանության...

15. 06. 99

ԾԱՌԸ

Թաց խոտը լսողություն դարձած հետեւում էր անձանոթ շնչառությանը...

Արեւը բարձրանում էր վեր, օրվա ափսեաչափ տարածությունը սառն օդի շփումից փշաքաղվում, սարսռում էր գիշերվա անբավարարությունից, փտած ծառի մերկությունից, մասրենու ծաղկի առավոտվա շնչառությունից: Օդի շարունակվող պաղության մեջ մատներս շոշափում էին թաց փայտի, խոտի, ծխի, չօդափոխված սենյակի խոնավությունը: Օրը նոր էր բացվում՝ նման թաքուն ցանկասիրության...

Վարար անձրեւը շրմփոցով թափվում է, փտած ծառաբնին կիսատ թխկիներ, սոսիներ ու բարդիներ են աճում... Կարմրափետուր թռչնի կտցահարումից ու միջատների բզզոցից հոգնած՝ ցանկապատին կպած կնոջ մարմինը մեկ կծկվում, մեկ թոթափվում է ցավից: Խոտիարքի կանաչը դեղնում է, մետաղյա ճոճաթոռը դատարկությունից հորանջում:

Ծառի մերկության մեջ բացված սերը մաքուր վայելքից այնքան է հեռու, որքան գիշերվա սուր խոնավահոտը առավոտվա դաղձի ու մասրենու տարածուն բույրից, որ վերեւի սարերից իջնում է իբրեւ կանխատեսված խոստում... Սարերը լուռ էին՝ ունկնդրելիս:

Թաց խոտը սվսվում է փախուստից, մասրենու թուփը մերձենում է մեր մարմիններին, այնտեղից սկիզբ առնող ճանապարհներին ուղեւորները դադար են առնում: Մութը ծածկում է ամեն ինչ՝ ձայները, գույները, բույրերը, ճերմակ բարձը, փտած ծառաբնի թաքուն սերը:

Աստղամաքուր գիշեր էր, երբ խուսքի հետագիծը լքեց ծառը, գարեջրի կիսատ բաժակը, տների թաց կտուրները, տղամարդու արեւախանձ դեմքը, որ մնաց անխուստում կնոջ մոռացման անդունդներում: Ասֆալտին ծխախոտի կիսատ քնթուկներ կային:

Մասրենու ծաղիկն այնքան էր ճերմակ, որ օրը խաղաղվեց շատ արագ. ճանապարհը հաշտ էր ու բարի, երեկոն թաքնվեց կտուրների տակ:

Մենք դեռ կշարունակվենք անձրեւի հոսքում...

1999

ՆԿԱՐԻՉԸ

Լույսը բացվում է շատ արագ: Չեմ ուզում, որովհետեւ գիշերը կանգնած է դռանս առաջ ու չի հեռանում:

Գիշերը չի քնում ու ստիպում է մեզ նույնպես չքնել. որոգայթ, որ գցել է իր ցանցը: Գիշերը չի բացահայտվում, նա ծածկում է իրեն մուգ հագուստով, թաքցնում իրական դեմքը. քչերն են փորձում բացել դիմակը: - Գիշերը՝ մեր կյանքի այս աներեւույթ ժամանակը, փաստորեն, մեզանից խլում է մեր մարմինը, որովհետեւ ուզում է դադար առնի, լքի մեզ ժամանակավորապես, այնքան մինչեւ հասնի պահին անցանկալիի: Իսկ նա՝ անքուն այս տղան իրենից հեռացնում է գիշերը, որ մարմինը դադար չառնի: Շտապում է...

Չեմ սիրում, երբ լույսը բացվում է արագ, ուզում եմ գույները վերեւում այնպես ձուլվեն, որ մտքերը խառնվեն... կորցնեն սկիզբը... Որովհետեւ ոչինչ այնքան լավ չէ, որքան թաքնված գույնը գույնի հետեւում, որքան ծաղկի չբացված թերթիկը քնի մեջ, որքան ծածուկ միտքը բառի ետեւում:

Որովհետեւ լույսը բացվելուն պես հարեւան ծեր կաչաղակը լույսի փեշից կախ, ձայնը գլուխն է գցում ու միայնակ շանը ստիպում կանչել գայլի ոռնոցով, ասես վերջը մոտեցել, իսկ մնացածներն անտեղյակ են: Չաչանակ երկու կին բռնաբարում են խոսքը, կասկածը կառչում է կիսաքուն ուղեղից, դառնում կպչուն միտք ու ցած ընկնում:

Իսկ այնտեղ, բլուրներից այն կողմ առավոտը կբացվի գնացքի սուր, երկար սուլոցով, ու մութը դեռ երկար կմնա թանձր: Քնից փախչելով՝ նա կմոտենա փակ

պատուհանին, կփորձի տեսնել ձայնը այն դեմքի, որ ամիսներ շարունակ շպարվում էր վարպետորեն:

Եվ հետո երկրագնդի, որ գնալով փոքրացնում է չափսերը, մի ուրիշ կետում, որտեղ լույսը չի հասցնում փոխել հագուստը, ու Լեռը դրանից այնպես է խոժոռվում, որ պատրաստ է ժայթքել առանց ծանր ու թեթեւ անելու, ահա հենց այնտեղ մեկը, որ դեմքը քողարկում էր կեղծ քաղաքավարությամբ, կմերկացնի իր բարեպաշտությունը: Իսկ այն մյուսը իբր իմաստնությամբ, կշարունակի մարդկանց վստահեցնել, թե դեռ կարող է տանել իրեն վստահված հնից ժառանգած ծանրությունը...

...Ուրեմն պետք չէ, որ լույսը բացվի առանց զգուշացնելու...

Բայց դա դեռ ոչինչ: Բանն այն է, որ առավոտվա լույսի մեջ ճերմակ վարդի ժպիտը չի երեւում, մինչդեռ գիշերը նա ժպտում է թերթիկների ողջ հմայքով: Ժպտում է այնպես, ինչպես երեխաներն են ժպտում քաղցրավենիք տեսնելիս: Իսկ երեխաների ժպիտը գողանալը լավ չէ...

Եվ, այնուամենայնիվ, որքան էլ գիշերը ծաղկի նկարչի գունատ ձեռքերին, որքան էլ գիշերվա ծալքերի մեջ նա թաքցնի հայացքի տխրությունը, շփոթի կամ խառնի երկու գույն, միեւնույն է՝ լույսը թակելու է պատուհանը, որովհետեւ նա չընտրեց խավարը, եւ մանավանդ խոստացավ գիշերը նկարել սպիտակ... Հետո դեռ կորոնի ափ նետված մարգարտահատիկը, որ նրան ընդամենը մեկ բառ է հուշելու՝

- Հետեւիր ինձ:

ՍՏՎԵՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Խելագարին չեն խղճում, նրանից խուսափում են, գուցե վախենում:

Մենակությունը հետեւանք, վիճակ է, թե՞ ընտրություն:

Այս թռչունն ավելի հարազատ է, քան բազմությունները բոլոր:

Միայն ծերերն են մաքուր հոգի փնտրում.-
Կարեկցանքի անհրաժեշտությունից:

Ինչպե՞ս ձեռք բերել դիմակ՝
Ոչ թե մեկը, այլ մի քանիսը:

Կորցրած դեմքի տեւականությունից ինքն էլ ձանձրացավ:

Ամեն ինչ ենթակա է վերադարձի
Առանց սակարկման,
Ի շրջանս յուր...

19. 06. 2016

ԱԳՌԱՎԸ

ԷԴԳԱՐ ԱԼԱՆ ՊՈՅԻ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ

Լույսը մթի խորքում ծնվում է, ինչպես մանուկ:

Գիշերվա տենդին հաջորդում է առավոտի մղձավանջը: Ճերմակագորշ ուրվագծերով մանրիկ բլրաշարերից այնկողմ մի թախիծ կանչում է օտարության դառնության մեջ: Նա դժվարանում է բացատրել, թե դառնահամը ինչպես կարող է այսքան գրավիչ լինել:

Ագռավի ստվերը՝ Էդգար Ալան Պոյի, անակնկալ թառեց մտքի բարակ ճյուղերին: Թուխ փետուրների միջով զգում էր մարիկ բլրաշարերից, դեղնականաչ հարթություններից, հորիզոնից այն կողմ ապրող ճգնավորի խուսքի համը:

Ագռավը կռնչում է՝ Never more...

Ու կռինչը այնպես է խոցում սիրտը, որ սեղանին դրված, դեռ չխզմզված կտավը ներկվում է լերդացած արյան գույնով: Oh, այդ Ագռավը՝ մտքին թառած անարգել ու անտարբեր շարունակում է իր գործը: Բաց աչքերով տեսնում է կտավին հայտնվող ծաղկանման կարմիր հետքը. էլեկտրական շոկից թպրտացող սիրտը հուշում է հեռացնել անկոչ թեւավորին: «Տես՝ որքա՜ն կդիմանաս»,- ճերմակ, գեղեցիկ ատամնաշարի արանքից բառեր է շպրտում Ճգնավորը: Բայց նա պետք է հասցնի խոսել Ագռավի հետ, որովհետեւ կարմրած կտավի մակերեսներից մի հեզ ժպիտ նայում է իրեն, եւ որովհետեւ մոտ է արթնացումը, որովհետեւ կտավը, ժամանակի միջով սահելով, փոխելու էր գույնը: Հորիզոնից շատ այն կողմ անորոշ հարթության մեջ լողացող, իր համար ան-

սովոր հայացքը անսպասելի ու հանդարտ մոտենում է: Եվ սկսվում է... թվում է՝ սովորական պատմություն մարդկային հոգիների... Սակայն նա արդեն զգում է վտանգը, թաքնված հին նետաձգի հարվածից պաշտպանվելու փորձեր դեռ չէր անում, երբ հանկարծ դռները՝ մաշված ու արդեն ծխնիներից կախված, սկսում են փեղկերն իրար զարնել: Ագռավը հեգնոտ շարունակում է՝ Never more... «Բարեկա՜մ ես, թե՜ թշնամի»,- անհուսությունը պաշարում է դողացող սիրտը: «Ուր որ է՝ կկորչի, ուր որ է՝ կգնա».- ձեռքը տանում է խռիվ մազերին, որի բարակ ճյուղերին անկոչ հյուրն իր իշխանությունն էր հաստատում: Վերջապես: Հոգոց է հանում. «Անցավ»: Կիսաբաց պատուհանից իրեն է նայում երկու սեւ փետուր,- արթնանում է՝ զգալով աչքերին քսվող թեւերի բախյունը:

Never more...

Փորձում է տեսնել երազի ու իրականության սահմանը, գլուխը սոսկալի պայթում, աչքերն ակնակապիճներից դուրս են թռչում: Սահմանը խախտված է.- ուղեղում՝ մշուշ: «Սեւը գույն չէ», - հիշում է ալեհեր, կույր նկարչի խոսքը, ձեռքը՝ լույսի ստվերին: Ագռավը, գիշերը, սեւ հայելին, մութ աչքերը,- բայց ինչո՞ւ սեւը գույն չէ:

Գիշերը մի ամբողջ իրականություն է ստեղծել. բոլորը խելագարի պես ծայնում են գիշերվա մեջ, վազում միմյանց ետեւից, շողոքորթում, միմյանց ոչնչացնում, լպրծուն աչքերով հալածում իրար, դառնացնում ու դառնանում, նույնիսկ փորձում միմյանցից սեր կորզել, որ հետո ագռավի տեսքով առավոտը գալուն պես թառեն մտքերիդ չոր գավազաններին ու կռնչան... Never more... Ահա ագռավը թեւերը մոտեցնում է կրակին՝ կտուցը

կտավի ծաղկի մեջ պահած. - գալարաձեւ ծուխը աստիճանաբար նոսրացնում է խավարը… Պետք է արթնանալ, զանգերն ուր որ է՝ կհնչեն: Մետաղադրամներ է դանդաղ սահեցնում ջրերի մեջ, վախենում է, փորձում է սիրաշահել ջրերին:

Ահա, ահա նեղլիկ, ծուռ ճանապարհի վերջնամասում նշմարվում է մատուռը, պետք է շտապել, հասցնել է պետք, ժամանակը չի սպասում, իսկ ահա նրանք անհաղորդ դեմքերով, որպես մետաղի կշռաքարեր սպասում են… լարված են:

«Օ՛, Աստված, ո՞րն է իմ մեղքը»- լսում է սեփական ձայնը, որից սիրտն ավելի է կուչ գալիս,- ի՞նչ գիշեր է, երազ է՞, թե՞ իրականություն.- պատասխան չկա: Համենայն դեպս դեռ երբեք երազն այսքան մոտ չէր եղել իրականությանը:

«Քը՛22»- աջ կողմից մոտեցող Ձեռքը հեռացնում է Ագռավին: Խաչափայտին մոտենալու ճանապարհը կարճելուն Ագռավը բավական օգնում է: Բոլորովին չէր սպասում. նա արագ հասկանում է, որ թեւավորը ավելացնում է տառապանքը, մեծացնում է մենակության չափը ու զորացնում է կամքը: Աջից իրեն պահող Ձեռքը շշնջում է՝ «Չբացե՛ս աչքերդ, վտանգը դեռ առջեւում է, չնայե՛ս աչքերին»: Նեղ ճանապարհը ավարտվելու վրա է.- խեցիները դեռ քնած են ծովածոցում: «Դեռ ջրերի կապույտը կողողի քեզ»,- հուսադրում է ինքն իրեն: Իսկ առայժմ գիշեր է, ստվերներն ու գծերը խառնված են դեռ, մեղեդին խեղդվում է սարդոստայնի մեջ՝ քաղցր թույնը հոսեցնելով նեղ սենյակի մեջ, որտեղ ահա նա՝ Ճգնավորը ինքնախաբեկանքի հերթական ճիգն է անում՝ թուլացող մարմնին սեր հացնելու հուսահատությամբ:

Մեղեդին դանդաղ հալվում է նրա բարակ մատներին, դիպչում դիմացի ճերմակ, դեռ չգրված կտավին: «Մենք երբեք արթնության մեջ չենք լինի», - լսում է խորքից եկող ձայնը:

Գիշերվա նվագախումբը վերջապես լռում է, որովհետեւ Ագռավն ավելի բարձր, խլացնելու աստիճան բարձր է ձայնում՝

NEVER MORE…

30. 05. 2015

ԾՈՎԸ

Ծովը շոյում է հիշողությունս:

Երբ առաջին անգամ մտա ծով՝ սառնությունից մաշկս դողաց: Վարանեցի, ինձ թվաց՝ կարոտ էր տեւական...

Մի քանի կաթիլ արցունք մնացել էր աչքերիս մեջ, աննկատ թափվեցին. ես դրանք խառնեցի ծովի կապույտին: Ինձ թվաց՝ ջրերը հուզվեցին... այնպես մերկ էին:

Ես զգացի՝ ինչպես է էությունս հոսում ու ձուլվում անհորիզոն կապույտին:

Երեկոյանում էր: Ջրերի հորիզոնները մոտենում էին ավարտին, միանում երկնքին: Արեւը իջնում էր, որքան ցածրանում, լույսն այնքան շատանում էր. գույները շլանում էին:

Արեւի վայրէջքը ցավոտ էր՝ երկինքը կարմրում էր, շիկնում, ջուրն ավելի էր տաքանում, ապա հանգչում, սառչում: Ծովի ու երկնքի հանդիպման պահն էր: Ջուրը ափ էր նետում զայրույթի շիթեր, շաչող ալիքների մեջ՝ ափսոսանքի հառաչանք... Մենակ էի. ջրերի մեջ էի, շուրջս մարդ չկար, վայելք էր, սքանչացում, զգացմունքի անէացում:

Մի ճայ սուր ձայնեց, հետեւեցին մյուսները: Մտքիս մեջ գրառեցի ավազի հիշողությունը փոքրիկ ոտնահետքերի, որ ամրոցներ էր սարքում ավազից ու քանդում հրճվալի...

Ծովն ինքնիշխան է՝ ազատ բռնակալ... Նա հմայում է, ջրերի գայթակղությունը շոյում է ծնկներս: Ես անկարող եմ դիմադրել ուժի գեղեցկությանը: Հանձնվում եմ, որովհետեւ աչքերս փակ են, միտքս՝ ջրերին հանձնված:

Երախտապարտ եմ պահին, միայն արձանագրել կարող եմ. «Ծով, քո գրկի մեջ գույները կարող են անհետանալ, երազները ընդելուզվել հորիզոնին, սերը՝ ջրամույն լինել: Դու որքան մերձեցնում ես քեզ արագ, նույնքան՝ հեռացնում»:

Ես գիտեմ՝ Հուշի տեւողությունը ինձանից է կախված: Դու ավազի վրա հետքեր չես թողնում, ջրերդ սրբումտանում են: Դու ամեն պահի մեռնում ու նորից ես ծնվում...

Դու հեռանում ես... որովհետեւ գիտես կարոտի գաղտնիքը...

Վերադարձի ճանապարհին շաղ էի տալիս հիշողության մանրիկ ավազներ:

Որ հավաքեմ հետո...

2.10. 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁՈՆ ԳԻՇԵՐԻՆ 3
ԱՍՏՂԱՓՈՇԻ 4
ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ 5
ՀԵՎՔ..6
ՍԵՐԸ 7
ՀԵՌԱՑՈՒՄ 9
ԼՈՒՍԻՆՆ ԻՋՆՈՒՄ Է ՋՐԵՐԻՆ..10
ՁԱՅՆԵՐ 11
ԲԱՌԸ 12
ՄԵՐՁԵՑՈՒՄ..13
ԱՐՏԻՍՏԸ..14
ՀԻՆ ՔԱՂԱՔ..15
ՓՈՂՈՑԻ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ 16
ԱՐԵՎԱԾԱՂԻԿ..18
ԱՇՆԱՆԱՅԻՆ ԷՍՔԻԶ 18
ՀԵՏՔԵՐ 19
ԿԱՐՈՏ..20
ԱՊՐԻԼ 20
ՈՒ ԵՍ ԿԼՌԵՄ..22
ԲԱՑՎՈՒՄ Է ՕՐԸ..23
ՊԱՏԿԵՐ 24
ՁԱՅՆԱԿՑՈՒՄ..25
ՃԵՐՄԱԿ ՀՈՒՅՍ..26
ՋՂՋՈՒՄ 27
ԱՄՌԱՆ ՄԻ ԳԻՇԵՐ..28
ԿԱՐՄԻՐ ՏԱՆԻՔՆԵՐԸ ՍԵՋԱՆԻ..29
ԱՇՆԱՆԱՅԻՆ 31
ՕՐ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 32
ԺՊԻՏ..33
ԳԱՂՏՆԻՔ 34
ԱՆԱՎԱՐՏ..35
ՏԽՐՈՒԹՅԱՆ ԱՅԳԻ 36
ՍՏՎԵՐՆԵՐ..37
ԱՆԵԼԱՆԵԼԻ..38
ՄԵՂՔԸ 39
ԱՆԹԱՓԱՆՑ..40
ԱՐՏԱՔՍՈՒՄ 41
ԵՐԱԶ 43
ԿԱՐՄԻՐ ԽԵՑԻ 44
ՀԵՌԱՑՈՒՄ 45
ԱՆՀՈՒՍՈՒԹՅՈՒՆ 47
ԵՐԿՅՈՒՂ..48
ՄԱՍՐԵՆԻ..49
ԾԱՌԸ..51
ՆԿԱՐԻՉԸ..53
ՍՏՎԵՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ 55
ԱԳՌԱՎԸ..56
ԾՈՎԸ 60

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍՏՎԵՐՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան
«Վան Արյան»
2018

Հրատարակիչ-խմբագիր՝
Վան ԱՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
Լոռա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

Չափսը՝ 60X84, 1/16: Ծավալը՝ 4 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ:

Տպագրվել է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում:
Երևան, Բաղրամյան 3:

Մելանիա Բադալյանը ավարտել է Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը:
Աշխատել է «Արևիկ» հրատարակչությունում, 2000-ից՝ «Ազգ» օրաթերթում, 2004-2014-ը եղել է «Ազգ մշակույթ հավելվածի» պատասխանատու խմբագիրը:
2007-ին արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ազդարար» մրցանակին, 2009-ին՝ Թեքեյան մշակութային միության «Յակոբ Վարդիվառեան մամլո մրցանակին»՝ «Ազգ» օրաթերթում մշակութային հրապարակումների համար:

ISBN 978-9939-70-259-9